Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 258 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանությանը հանձնված տարածքների բարելավման ապահովում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ (Ֆրիդրիխ Էբերտ Անլաժ 36, 60325, Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիա)
4.	Ծրագիրը կատարողը	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (քաղ. Սևան, Կարմիր բանակի 56, ՀՎՀՀ՝ 08602899)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Սևան ազգային պարկ, բնագավառը՝ շրջակա միջավայրի պահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	29 930 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) տնկիների ձեռքբերման և տնկման (տարածքի նախապատրաստում, անտառ–մշակույթների հիմնադրման համար տարածքի տեղանշում լարով, փոսերի փորում, սերմնաբուսակների տնկում) ու խնամքի, խոտհնձման, ոռոգման աշխատանքների իրականացում – 14,273,800 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը. 2) «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանությանը հանձնված տարածքների բարելավման գործընթացների համար տրանսպորտային միջոցով և սարքավորումով ապահովում – 15,656,200 դրամ: Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ամենագնաց ավտոմեքենայի ձեռքբերում – 12,300,000 դրամ. 2) մոտորանավակի շարժչի ձեռքբերում - 3,356,200 դրամ. 3) տնկիների ձեռքբերում – 2,880,000 դրամ. 4) տնկիների տնկման և խնամքի, խոտհնձման, ոռոգման հետ կապված ծառայություն-ների մատուցում – 11,393,800 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Շրջակա միջավայրի նախարարություն

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) հաշվետվության ներկայացում Կովկասի Բնության հիմնադրամին. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին. 3) հաշվետվության ներկայացում Շրջակա միջավայրի նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ